ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Լ-58>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«20» «08» 2026թ.**

Ժամը 10:00

1. Տեղեկություններ գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ.

ՀՀ ՆԳՆ կարիքների համար այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Լ-58 ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին էլեկտրոնային հայտ ներկայացրել են «Մարիամ Թովմասյան» ԱՁ-ն «ՎԱԼՍԱ» ՍՊԸ-ն, «Արմեն Սաֆարյան» ԱՁ-ն:

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Լ-58 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «Մարիամ Թովմասյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվում են բավարար իսկ 5-րդ 6-րդ չափաբաժիններով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՎԱԼՍԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում **առկա են անհամապատասխանություններ**, մասնավորապես՝ հայտում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում առաջարկվող ապրանքի նկարագրում **նշված չեն ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը:**

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Լ-58 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ /1/ աշխատանքային օրով և «ՎԱԼՍԱ» ՍՊԸ-ին առաջարկել /1/ աշխատանքային օրվա ընթացքում կատարել վերոգրյալ անհամապատասխանության շտկումը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա կասեցված մեկ /1/ աշխատանքային օրը ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝

ՀՀ ՆԳՆ ՏՏևԿՎ պետի պարտականությունները կատարող Ա. Թամազյան

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ ՆԳՆ ՏՏևԿՎ ռադիոկապի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Մարանդյան

ՀՀ ՆԳՆ ՏՏևԿՎ տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Մ. Բաբայան

Քարտուղար՝

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյան